# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/99 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր**

**08 սեպտեմբերի 2025թ.**

2025թ-ի սեպտեմբերի 8-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Բերքաշատ բնակավայրի գազաֆիկացման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/99 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

| | |
|---|---|
| Մ. Հովհաննիսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, |
| Թ. Աբգարյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի առաջին կարգի մասնագետ, |
| Դ. Մովսիսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, |
| Ք. Գալստյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Մ. Հովհաննիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, բացակայում էր՝ Մեծամորի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Ահարոնյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտերի մասին:
3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ-ի սեպտեմբերի 8-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի վարչական կենտրոն 1 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 17:45-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային գինը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Բերքաշատ բնակավայրի գազաֆիկացման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | 90,000.00 |

Ընթացակարգի հայտերի բացումը նախատեսված էր www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ-ի սեպտեմբերի 8-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2025թ-ի սեպտեմբերի 8-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման ընթացակարգի շրջանակում հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Մ. Հովհաննիսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Թ. Աբգարյան ____________

Դ. Մովսիսյան ____________

Ք. Գալստյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ____________